

ԶԻՆԵԱԼ ՄԻՋԱԿԵՊ ՀԱՏԱՍԻ ՄՕՏԵՐԸ

Երէկ, առաւօտեան ժամը 11:00ին, Պէյրուսի հարաւային արուարձաններուն եւ Հատասի միջուկի գտնուող շրջանին մէջ, գողութեամբ ամբաստանուած եւ պետութեան կողմէ հետապնդուող տարբերու եւ ներքին գործոց ապահովութեան ուժերուն միջեւ պիւնէլ բախում տեղի ունեցաւ:

Մինչ հետապնդուողները կը փորձէին փախուստ տալ եւ կրակ բացած էին դէպի ապահովական ուժերուն կողմը, ապահովական ուժերը հակադարձեցին եւ սպաննեցին անոնցմէ երեքը: Նշուեցաւ, թէ անոնք այլ առիթով Պէքասայի մէջ եւս կրակ բացած էին բանակայիններու վրայ:

Ըստ ապահովական ուժերու փոխանցած տեղեկութիւններուն, հետապնդուողներու դէմ տարբեր դատեր բացուած էին եւ անոնք կապուած էին ինքնաշարժի գողութեան ցանց մը եւ թմրեցուցիչի առևտուրով կը զբաղէին:

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր դիտել տուաւ, թէ այս անձերը վանապան գործողութիւններ եւ գողութիւններ կատարած էին Պէյրուսի եւ Լեռնայի շրջանին մէջ:

Այս հարցով հետաքննութիւնը կը շարունակուի, որպէսզի կարելի ըլլայ յայտնաբերել նաեւ անոնց գործակիցները:

ALEXANIAN EXCHANGE
Bourj-Hammoud - Armenia Street
Tel.: (01) 252952 - 252852 - (03) 270755

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Դ. «Կարմիր Լեռ» Կոմիտէն խոր ցաւով կը գուժէ իր շրջանի Գալիկի վաստակաւոր ընկերներէն՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԵՐՊԵԹՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Լուս Անճելըսի մէջ:

ՄԱՀԱԶԴ

Այնքանի քաղաքացիները խոր ցաւով կը գուժէ Այնքանի երկար տարիներու Գալիկի քաղաքացին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԵՐՊԵԹՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեկ, Միացեալ Նահանգներու մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարգարիտ Ծերպէթեան
Տէր եւ տիկին Սերոբ Ծերպէթեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Նորայր Ծերպէթեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Զաւէն Ծերպէթեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մովսէս Թասլաբեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութիւն Եղիարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Անդրանիկ Ուրֆալեան եւ զաւակունք
Տիկին Լուսին Արմենակեան եւ զաւակունք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԵՐՊԵԹՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Մուսա Լեռ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 16 Դեկտեմբեր 2003ի առաւօտուն, Լուս Անճելըսի մէջ:

●Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
ԾԱՆՕԹ՝- Թաղման եւ ցաւակցութեան մանրամասնութիւնները հետագային:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրանուշ Ծահինեան
Տէր եւ տիկին Արամ եւ Սօսի Սաղըրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին տղայ Թարուսիւն եւ Ռուսնանա
Տէր եւ տիկին Պետիկ եւ Մակի Վարժապետեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ եւ Լենա Քիւրտեան եւ զաւակունք
Տիկին Մարի Գանթարեան եւ զաւակունք
Տիկին Հերմինէ Ծահինեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Զարեհ եւ Թալիս կ'օգոստեան
Տէր եւ տիկին Պողոս եւ Վարդուհի Ծահինեան եւ զաւակունք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍ ԾԱՀԻՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 16 Դեկտեմբեր 2003ին, «Հարուն» հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորեքշաբթի, 17 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Պուրճ Համուտ, «Արմենիա» պողոտայ, դեղարան Արարի կից, Հինգշաբթի 18, Ուրբաթ 19, Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբերին: Հեռ. 03/705881:

ՍՈՒՐԻԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ԸՆԴԴԻՍԱՑՈՂ ԿԵՑՈՒԱԾԵԼԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչող օրինակներ ստորագրութեան դէմ յանձնարարած ալիքը շարունակուեցաւ երէկ:

Երեսփոխան Մոհամէտ Եահիա դիտել տուաւ, թէ չէ գործադարձ Միացեալ Նահանգներու նախագահին ստորագրութեամբ, որովհետեւ եղածը Սուրիոյ դէմ սիրական քաղաքականութիւն մըն է: Ան նշեց, թէ Լիբանան պէտք է մնայ իր կերպով գորակցի Սուրիոյ եւ անոր նախագահին, որ գիտակից կերպով կրնայ լուծել հարցերը եւ կ'առաջած մնայ իր սկզբունքներուն:

Պուշի ստորագրութիւնը դատապարտեցին նաեւ Ամալ շարժումը, Ժողովրդապարական, իթիֆազեան եւ արգիւնալ Լիբանանեան Ուժեր կուսակցութիւնը: Անոնք դատապարտեցին ամերիկեան կեցուցումը եւ ըսին, թէ ան կը ծառայէ իւրայայտեան ծրագրներու իրագործման: Կուսակցութիւնները իրենց գորակցութիւնը յայտնեցին Սուրիոյ եւ նշեցին, թէ ան վարժ է ճշմարտներուն եւ սպառնալիքներուն դէմ կենալու:

ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՅԷՏ ԻՐԱՆԻ ՄԵՉ ԲՆՆԱՐԿԵՑ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Ուժանիւթի եւ ջուրի նախարար Ալուպ Հրմայէտ երէկ իրանցի իր պաշտօնակիցին հետ ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուեցան երկու երկիրներուն փոխ յարաբերութիւնները եւ ելկտրականութեան եւ ջուրի քաղաքականութեան մէջ համագործակցելու կարելիութիւնները: Տեսակցութեան ընթացքին արծարծուեցան այս մարզին վերաբերող նոր ծրագրերը եւ իրանեան յայն փորձառութիւնը այս առնչութեամբ: Նախարար Հրմայէտ կոչ ուղղեց իրանցի գործարարներուն՝ Լիբանանի մէջ իրենց ծրագրերը ի գործ դնելու: Զբոյ նախարարները անդադարձան նաեւ շրջանային իրադարձութիւններուն եւ վերջին գարգացումներուն:

Ան իրանի մէջ կը մասնակցի ջուրերու օգտագործման նուիրուած համապումարին:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:00 «Ուստի-Թատրոն» կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մամուլ Մարգարեան
- 9:40 «Օրուան տոն»
- 9:45 «Աստղիկ» կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մամուլ Մարգարեան
- 10:45 «Ի՞նչպէս կը տօնէք» այսօրուան հիւրը է Երեսփոխան Էլի Աուն
- 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 1:30 Հայաստանեան լուրեր
- 3:00 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 3:10 Արաբերէն յայտագիր
- հարցազրոյց Լիբանանի ճաշարանատերերու սենտիքայի նախագահ Ժիհատ Նազհայի հետ
- 4:45 «Բարի երեկոյ Վանայ Չայնէն» ուղղակի ձայնասփոսում այլազան եւ հետաքրքրական միւլթիմ, երգեր, հարցազրոյց եւ այլն: Յայտագիրին հիւրը է պարիթոն երգիչ Գեորգ Զերմեթեան
- 6:50 «Օրուան տոն» (կրկնութիւն)
- 7:05 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)

ԾԱԽՈՒ ԸՈՂ

Այնճարի մէջ: Դեռ. 01-262599:

ԿՈՒՉՈՒԻ

Կանանց հագուստի վաճառատան մը համար վաճառող օրինոր մը, ժել էլ Տիպի շրջան: Դեռ. 04-713998:

«ԷՆ. ԹԻ. ՎԻ.»Ի ԼՈՒՐԵՐՈՒ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԵՐԿՈՒ ՕՐՈՎ ՊԻՏԻ ԴԱԴՐԻ

Տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա, հիմնուելով տեղեկատուութեան ազգային խորհուրդի առաջարկին վրայ, որոշեց կասեցնել «ԷՆ. ԹԻ. ՎԻ.»ի լուրերու եւ քաղաքական յայտագրերու ուղղակի կամ անուղղակի սփռումները:

Երկու օրուան համար ճշգրտած այս որոշումին պատճառը Ուրբաթ, 12 Դեկտեմբերին հաղորդուած լուրերուն ընթացքին տեղեկատուական օրէնքներու խախտումն էր: Նախարարը նշեց, թէ որոշումը չգործադրելու կամ նոյն սխալը դարձեալ գործելու պարագային աւելի լուրջ ու խիստ միջոցառումներու պիտի ըլլան նախարարութիւնը, եւ թէ հարկ ըլլայ զայն պիտի փոխանցէ դատարանին: Մինչ այդ, կայանը իր լուրերուն աւարտին հաղորդեց, թէ նախարարութեան որոշումով երկու օր լուրերու սփռում տեղի պիտի չունենայ:

273 ԻՐԱՔՑԻՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԻՐԵՆՑ ԵՐԿԻՐԸ

Իրաքի մէջ բռնատիրութեան դժգոհ, ապա ամերիկեան պատերազմէն խոյս տուած եւ ապօրինի ձեւով Լիբանան մուտք գործած 273 իրաքցիներ երէկ Ռուսիայի բանտէն յատուկ մարդատարներով փոխադրուեցան Իրաք: Այս մէկը տեղի ունեցաւ լիբանանեան եւ իրաքեան կողմերուն միջեւ քանի մը շաբաթէ ի վեր կատարուող բանակցութեանց իրեւարդիւնք:

Մինչ այդ ապահովական ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հրահրեց իրաքի քաղաքացիները իրաքեան դեսպանատուն ուղղուելու, որպէսզի կարենան վերադառնալ իրենց երկիրը: Ըստ նախնական տուեալներու, Լիբանանի մէջ կան շուրջ 900 ընտանիքներ, որոնք փախաբ յայտնած են իրենց հայրենիք վերադառնալ:

ԴԱՏԱԽԱՋ ՄԱՏԻ ԴԱՐՁՅԱԼ ՄԵՐԺԵՑ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԱԼԻ ԱՊՏԱԼԼԱՆ

Պէյրուսի աւագ ապատարձակելու առաջարկը: քննիչ դատախազ Հարթմ Մատի երէկ հանդիպում մը ունեցաւ երկրագործութեան նախարար Ալի Ապտալայի եւ ամերիկեան - լիբանանեան երկրագործական միացեալ ծրագրի պատասխանատու Ապտէլ Հաֆիկ Նասմենիի հետ:

Ան դարձեալ մերժեց նախկին նախարարը, անոր եղբայրը եւ անոնց գործակիցը

ԳՐԱԴՈՒՄՆ ՕՐ
Հ. Յ. Դ. «ԳԱՐԵԳԻՆ ԼՏՈՒՄ» ԱՎՈՒՄԲ 6 ՄԱՐՏ 2004

Հոգաւորութեամբ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջատոր Լորատու Հայոց Թատրոն)
Նախագահութեամբ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ
ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՅՈՒՅԱՅԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ
Լոուսատու՝ ԼԵԻՈՆ ԹԱՇՃԵԱՆ
Հասոյթը պիտի տրամադրուի «Ազգային»
Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երկուշաբթի ժամը 8:00ին, «ՎԵՐԱԼԵՆ-Հ.Մ.Մ.» մարզաշահութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:
ՀՐԱՆԵՐ
Ծանօթ- Ցուցահանդէսը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրը կար ժամը 4:00էն մինչեւ երկուշաբթի ժամը 8:00

ՆՇԱՐ ՊԱՏՃԱՌ ՄՆԱՅ ԻՐԱՔ ՄՆԱԼՈՒ

Եթէ պահ մը հաւատանք դաշնակից ուժերուն Իրաք ներխուժումին պատճառներուն, աւելի ճիշդ՝ պատրուակներուն, կորսանք շարունակ հոյովեցին պատերազմի նախօրեակին ու կը շարունակեն հոյովել մինչեւ օրս, կը նշանակէ նաեւ ուրեմն, որ արդարօրէն պէտք է հարց տանք հետեւեալը:

Հիմա, որ հաւաքական քանդումի վէրքեր չգտնուեցան, ինչպէս նաեւ Սատտամ Հիւսէյնի ձեռքաւարտութեամբ պաշտօնապէս տապալած է անոր վարչակարգը, ի՞նչ պատճառ մնաց, որ դաշնակից բանակները տակաւին մնան Իրաք:

Անշուշտ նման հարցադրումներ շատ նախնական կրնան թուիլ ներխուժող պետութեանց վարչակարգերուն համար, այսուհանդերձ աշխարհի ժողովուրդները, նոյնիսկ տուեալ երկիրներուն ժողովուրդները կը շարունակեն իրենք պիտենք միաձիտ ձեռքներով ու յամառի իրենց հարցադրումներուն վրայ եւ կը սպասեն պատասխանին:

Վստահաբար բնագրաւորները այս անգամ պիտի երգեն ժողովրդավարութեան կարգերու հաստատման «երգը»: Մինչեւ որ Իրաքի մէջ ժողովրդավարութիւն, կարգ-կանոն չհաստատուի, դաշնակից ուժերը պիտի մնան Իրաք: Այս պիտի ըլլայ անշուշտ անոնց պատասխանը:

Բայց ժողովրդավարութիւն ելլող կամ հասկացողութիւնը այնքան առաձգական է, որ կրնայ շատ ջուր վերցնել: Իսկ եթէ արեւմտեան չափանիշերով ժողովրդավարութեան մասին է խօսքը, ապա ուրեմն դաշնակից ուժերը պէտք է լրիւ հաստատուին հոն, տակաւին երկար տարիներ...


Աւելի՛ս: Եթէ այդպէս է, բազմաթիւ երկիրներ պէտք է վերածուին Իրաքի, սկսեալ դաշնակից ուժերու գործարարներ վայելող շփացած մասնակցներէն՝ Թուրքիայէն, Նիքարակուայէն, հեռուոր Փաքիստանէն, ի՞նչպէս վերջակէտ դնել...

Բայց անոնք Իրաքի նման քարիւղ չունին, ոչ այ անոնց ղեկավարներուն ձեռքաւարտութիւնը կրնայ ոմանց նախագահական ընտրապայքարին համար իբրեւ լաւ արժանատի:

Ահա թէ ինչո՞ւ այդքան այ մեծ հարց մը չէ, որ այդ երկիրներուն մէջ այ Իրաքի նման ժողովրդավարութիւն հաստատուի, ահա թէ ինչո՞ւ չ'արժէր անոնց համար այ բանակներ շարժել, նկատառելի թիւով կոտ տալ, միլիտներ մսխել...

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Մի՛ մոռնար խնդրելու կադանդ Պապայէն ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿի գաւաթը, Նոր Տարուան լաւագոյն նուէրը



Գաւաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ.
- Բամպագային, «Ճաղվոյեան» կեդրոն, Պուրճ Բամուտ
- Նարեկայի, Պուրճ Բամուտ
- Obellx, Անթիլիաս

Հոգաւորութեամբ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջատոր Լորատու Հայոց Թատրոն)
Նախագահութեամբ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ
ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՅՈՒՅԱՅԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ
Լոուսատու՝ ԼԵԻՈՆ ԹԱՇՃԵԱՆ
Հասոյթը պիտի տրամադրուի «Ազգային»
Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երկուշաբթի ժամը 8:00ին, «ՎԵՐԱԼԵՆ-Հ.Մ.Մ.» մարզաշահութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:
ՀՐԱՆԵՐ
Ծանօթ- Ցուցահանդէսը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրը կար ժամը 4:00էն մինչեւ երկուշաբթի ժամը 8:00

Հ. Յ. Գ. 113 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱԾ ԸՆԿ. ԱԼ ՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Այսօր «Դաշնակցութեան Օր»ն է: Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան 113ամեակը:

Դաշնակցութեան օրուան իօսքը իրականում հաշուետուութեան և ապագայ գործունէութեան ուղիները որոնազօղ պատգամ է:

Սակայն, նախ և առաջ առիթ է՝ մի պահ վերջինը և յարգելու մեզանից առաջ և քաջամտութեամբ գաղափարական ընկերների ու նահատակների յիշատակը. Դաշնակցական լինեն նրանք, թէ Դաշնակցութեան գաղափարների համար՝ ազգի ու հայրենիքի սիրոյն Կոհուած պատմաարտիկներ՝ Արցախից մինչև Սարդարապատ ու Խանասարից մինչև Լիզպոն:

Յարգաքննարկելով: Օրեր է մնացել 2004 թուականի տարեմուտին: 21րդ դարի առաջին քառամեան փակելով, կանգնած ենք նաև 80 ամեայ տունդարձի պայքարի յաղթանակով հայտնաբերված պետականութեան պայմաններում լիարժէք ու ապտօրէն գործած Դաշնակցութեան քառամեայ գործունէութիւնը արժեւորող ու ապագայ ուղեգիծը մշակող Հ. Յ. Դաշնակցութեան 29րդ Ընդհ. ժողովի գումարման սեմին:

Ապտօտեանի մարդկութիւնը 20րդ արիւնտ դարի վերջին էջերը դարձնելով ու յոյս տածելով քաղաքական թէ հասարակական դէմքերի կողմից հրապարակ նետուած ժողովրդավարական, մարդկային իրաւանց, քաղաքակրթութիւնների երկխօսութեան ու խաղաղ գոյակցութեան կոչերին, խոր հիասթափութիւն ապրեց տեսնելով 11 Ապտեմբերի Նիւեորքեան դարաշրջիչ սահաւոր արքը, ու դրան հետեւող մեծապետական այն սանձարձակութիւնները որ նոյն այդ արժէքների ամրագրման ու պահպանման պատրուակով տեղի ունեցան ու դեռ շարունակուում են տարածաշրջանում: Գրոհ՝ որ իրականացում է Միացեալ Նահանգների գլխաւորութեան ու իր շահերին համապատասխան՝ միաբերեւ աշխարհակարգի հաստատման յստակ նպատակադրումով:

Գայով հայ ժողովրդի ազգային-քաղաքական կեանքին անցեալ քառամեակը եղաւ մի կողմից վերանկայացած Հայաստանում Հ. Շ. Կական ապագայի ղեկավարութիւնից ժառանգած աներից գործընթացները կասեցնելու, ներքաղաքական կեանքի կայունութեան պահպանման, ազգային բնութիւնով պետականութիւն կերտելու ձգտումների ու թերի ժողովրդավարութեամբ ընտրութիւնների տարիներ: Միւս կողմից ներքին ու մասնաւոր արտաքին ուժերի ուղղակի թէ անուղղակի նախաձեռնութիւններն ու ճնշումներն ղիմագրումն ու մի ժամանակաշրջան՝ Արցախի, Հայոց պահանջատիրութեան, Հայթորք յարաբերութիւնների բնականոնացման հարցերի առումով:

Իսկ հայ իրականութեան կեանքում ինչպէս իր հարիւրամեայ պատմութեան ընթացքին այս քառամեակում եւս չի եղել որեւէ քաղաքական, ազգային եւ հասարակական խոշոր իրադարձութիւն կամ նախաձեռնութիւն, որ Դաշնակցութիւնը մասնակցութիւն կամ դերակատարութիւն ունեցած չլինի:

Հայաստանում իշխանութեանը սատարելու դիրքերից անցնելով՝ Դաշնակցութիւնը այսօր արդէն ունի որոշակի, զգալի մեծ պարտաւորութիւնների ու պատասխանատուութեան դաշտ:

- Սիրելիներ, 21րդ դարի քաղաքական-տնտեսական արագ դարձը պարզացող հեռանկարում տեսանելի են
- Համաշխարհայնացման՝ կոնպալիպէյ-շնի գործընթացը,
- Միջին Ասիայից էներգիայի փոխանակումը դէպի արեւմուտք,
- Կրօնական ու մասնաւորի իսլամական կնի խմբորդումների վարթօնքը,
- Եւ կրկնաւան շրջանի վրայ օրրատ-օրէ տարածուող մեծապետական տնտեսական, մշակութային, ու դիւանագիտական գործը: Գործընթացներ, որոնք ուղղակի առնչուում են երբեմն սպառնում են նաև հայ պետականութեան ու հայ ժողովրդի գոյութեանն ու պարզացմանը:
- Ելնելով իր աշխարհայեցողքից, իր կտորած անէր քան մէկ դարեան քաղաքական ու մարտական պայքարի ուղուց, այսօր Դաշնակցութեան համար ամրագրած է մի շարք հիմնական արժէքներ, ու համայնումներ, որոնց հիմամբ էլ սահմանում է Հ. Յ. Դաշնակցութեան առաքելութիւնը, քաղաքական ուղեգիծն ու անելիքը առաջին պարիսպներում՝ վերնուշտիկ միջապային պարզացումների ու հայ ներկայ իրականութեան պայմաններում: Արժէքներ՝ որ անհրաժեշտ են գտնում շեշտադրելի՝ ներկայացնելով դրանց գաղափարաբանութեան համայնապատկերը այսօր՝ Դաշնակցութեան օրուան առիթով ու դաշնակցական սերունդների ղափառարկութեան այս դարբնացում ու մասնաւոր երբ Հայրենիքի պետական կեանքում առուել պատասխանատուութիւններ ստանձնելով, աստիճանաբար առաջանում է այն թիր կարծիքն ու տպաւորութիւնը որ Դաշնակցութիւնը ինչպէս Հայաստանում գործող բազում այլ քա-

ղաքական խմբաւորումները սուկ քաղաքական-պարլամենտական, կամ էլ համահայկական կառոյց ունեցող աւանդական կուսակցութիւն է: Ո՛չ: Հ. Յ. Դաշնակցութիւնը եղել է, է՝ եւ կը մնայ գերազանցապէս գաղափարական շարժում: Մենք միացել են համակրել էք Դաշնակցութեանը ոչ այն պատճառով, որ նա հպօր կազմակերպութիւն է կամ լաւ կուսակցութիւն, այլ որովհետեւ նրանից է բխում անհրաժեշտ եւ կենսարար գաղափարներ՝ մեր ազգի գոյատեւման, եւ ամբողջական ապտագրման համար:

Ի՞նչ է այս գաղափարական շարժման արժէքային համակարգի գաղափարաբանական հիմքը:

«Հ. Յ. Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհայեացքով ու արհմիջոցով ազգային, ընկերակրական, ժողովրդավարական եւ յեղափոխական կուսակցութիւն է»: Գաղափարական արժէքների այս քառամեայ գաղափարաբանութեամբ, այնքան ազգայնութիւնը, ընկերակրութիւնը, ժողովրդավարութիւնն ու յեղափոխականութիւնը Դաշնակցութեան մօտ հանդիսանում են որպէս լիարժէք ու համահասարակ, լրացուցիչ ու համահունչ, մէկը միւսին չհակասող եւ ներդաշնակ արժէքներ, որոնք որպէս ներքին օրգանական մէկ ամբողջականութիւն, կոչուած են ծառայելու նախ և առաջ Հայ Ազգին, ապա Հայ Ազգի եւ Հայ Մարդու արժանավայել եւ կատարելապէս ապտութեան ընդմիջից նպատելու համավարկային խաղաղ կենակցութեանն ու վարզացմանը:

Ահա գաղափարաբանական այս դիմագծով է Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայանում աշխարհին: Եւ ինչպէս անցեալին այսօր եւս ունի երեւութական եւ աներեւոյթ պահանջներ մեծ ու փոքր թշնամիներ, որոնք առուելաբար Դաշնակցութեան գաղափարականութիւնն ու գաղափարներն են թիրախ դարձրել:

Ներկայ պայմաններում «Նոր աշխարհակարգի» ստրատեգիաներ փակուած են յայտարարում ընդհանրապէս գաղափարաբանութիւնների էջը եւ իրենց քարոզչական լայն կարելիութիւններով փորձում են հաւատացնել հանրայնութեանը, որ գաղափարաբանութիւնները դատապարտուած են մահուան: Այս երեւոյթը, սակայն ամենեւին էլ նորութիւն չէ: Յանկաած աշխարհակարգի հաստատման գործընթացին վուզորդուած, գերպետական մեխանիզմներից սնուող մտաւորականութեան կողմից միշտ էլ տեղի են ունեցել «գաղափարաբանութիւնների յուղարկաւորութեան» արարողութիւններ: Եթէ Եալթայից յետոյ 1950ական թուականներին, Ռէյնոն Արոնսթեյն, Սիմոն Մարտին Լիւպտիէ եւ «ՆԱՌՕ»ական մտաւորականութեան այլ կարկառուն դէմքերի միջոցով տարածուել էր այն միտքը, որ չկան այլեւս գաղափարաբանութեան գոյատեւման պայմանները, ահա այսօր «նոր աշխարհակարգի» տեսաբանները, յանձին Զրանսիս Զոկուամայի՝ ի լուր աշխարհի յայտարարումն են, որ այս «նոր աշխարհակարգ»ում որեւէ գաղափարաբանութիւն այլեւս չի դիմանայ ու չի յարտեւելու:

Քարոզչական այս լարիւնտնում արդէն վերանորոգուած պիտի տեսնել թշնամանքի բաւարար հիմունքներ՝ գաղափարական ուրույն շարժումների հանդէպ առհասարակ:

Որոշակիօրէն Հ. Յ. Գ. ի նկատմամբ նոյնպէս գոյութիւն ունեն անընդունելիութեան պարագաներ, որոնք գերազանցապէս կապուած են նրա գաղափարական սկզբունքներին եւ հետապնդած նպատակներին:

Ի հարկէ Հ. Յ. Գ. ի 113ամեայ պատմութեան մէջ երբեք չի գտնուել նպաստաւոր պայմաններում: Նրա համար պայմանների նպատատուութիւնը սերտօրէն առնչուած է եղել հայ ժողովրդի ազգային բնականոն կեանքի պայմաններին, դրա անորոշութեանը: Արաբօներից, Դուստաններից ու Դրօններից սկսած եւ մինչև Արաբիան Աշտարակ, Սարգիս Արաբիան համեմատելու ու Սիմոն Եահնիեաններն եւ դեռ մինչև Աշտարակ, Եւսեպիան Մեղրեաններն ու Մերմուս Մոսեսանները երկարող, հայ ժողովրդի ժամանակակից պատմութեան ընդմիջից կարմիր թելի պէս ձգուած, այս երթը գոյութիւն չէր ունենայ՝ առանց համապատասխան հատկանշանքի վառելանիքի, առանց արժէքային շարժիչների եւ առանց գաղափարական մղումների:

Իրաւ գաղափարական շարժումները դիմանում են ամենանպաստ պայմաններին, շնորհիւ իրենց «հոսանքի դէմ ընթանալու» էականն եւ իրաւալի ունակութեամբ:

Եւ բացառութիւն չի կապում նաև Հ. Յ. Դաշնակցութիւնը: Հ. Յ. Դաշնակցութեան 113ամեակի այս հանդիսութեան առիթով ծանրաւայով մեր գաղափարական հայեացքների հիմնադրոյթների վրայ, այժմ պիտի փորձենք այդ հասկացողութիւններին էլնելով խորհրդածութեան նիւթ դարձնել մի շարք հիմնահարցերը, մարտահրաւերները, սկզբունքներն ու դրանցից բխած հեռահաս քաղաքական ուղիներն ու կենսաբանական դիմագրութիւնները, որոնք կարելի է խտացր-

նել հետեւեալ հինգ կէտերի ներքոյ:

Ա.- ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՅԸ

Հայրենիքն է հայազգի գոյատեւման ապահով ու հիմնական կոռուանք, իսկ հայրենիքն էլ ապահովուած է, երբ ժողովրդը կառչած է հայրենի հողին:

Հայրենիքը որեւէ ժողովրդի պատմական ապրելատարածքն է: Սակայն ամէն ապրելատարածք դեռ հայրենիք չէ: Ինչպէս հայրենի պատմաբան Լենդրոշ Խուրշուդեանն է բնութագրում. «Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ այն պատուում է ժողովրդի պատմա-մշակութային, ազգագրական, ճարտարապետական յուշարձաններով, նախնիների գերեզմաններով, երբ այն սրբազործուել է թշնամիների դէմ մղած պատերազմներում տարած յաղթանակներով, հերոսների արիւնով... Երբ այդ հողը ժողովրդի պատմական յիշողութեան մէջ է մտնում բանահիւսակն, պատմագրական առասպելներով, էպոսով, երգերով, հեքիաթներով, երբ հողը հասկացողութիւնը վերածում է «տուն» հասկացութեան, իսկ տունը հասկացողութիւն էլ՝ «Հայրենիք»:

Ինչքան էլ ապտ ու բարօր լինի այս երկիրը, որքան էլ երկրի տարիներ ապրած լինենք որեւէ երկրում, դրանք չեն կարող փոխարինել հայրենիքին:

«Հետեւաբար՝ արտագաղթը հայրենիքից ինչ պայմանների բերում էլ որ լինի՝ մերժելի է ու դատապարտելի: Դատապարտելի է մասնաւոր՝ երբ պարզ ու տեսանելի է արտաքին ուժերի կողմից այդ երեւոյթի ծրագրուած կերպով ընթացք տալու փաստը:

Հայրենիքի հայաթափումը միայն նպատատու է մեր թշնամիների համար:

Պէտք է դուրս շարտել մեր ժողովրդի հոգեբանութեան մէջ տեղ գտած «որտեղ հաց՝ այնտեղ կաց» ազգակործան կարգախօսը:

Մեր պարտականութիւնն է եղել ու այսօր նաև որպէս կառավարութեան մասնակից ուժ՝ պիտի աշխատենք ու շարունակենք մղել հայրենի իշխանութիւններին վերացնելու արտագաղթին տուն տուող առարկայական թէ ենթակայական պայմանները: Միաժամանակ համոզուած ենք, որ արտագաղթի դէմ ու հակառակ ուղիներում պէտք է «տուն դարձի» շարժում առաջացնել:

Ի վերջոյ, արտերկրում ապրող ամէն հայ պէտք է հասնի ազգային այն անվիճելի իրականութեան որ՝ եթէ սփիւռքն է իր ներկան, հայրենիքը իր անցեալն է ու ապագան:

Բ.- ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՐԱՊԵՒՄՆ ԵՒ ՀՉՕՐԱՅՄԱՆ ՀԱՐՅԸ

Անկախ պետականութիւնն է մեր ժողովրդի ապտ ու բնական պարզացման երաշխիքը, իսկ տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային առումներով պարզացած ժողովրդը կարող պետութեան հիմնական խարխիւն է հանդիսանում:

«Հետեւաբար՝ անկախ պետականութիւնը բացարձակ արժէք է, իսկ Հ. Յ. Դաշնակցութեան համար հիմնական խնդիր է հայ անկախ պետականութեան լինելիութիւնը՝ իր քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային եւ ազգային անվտանգութեան ստորոգելիներով: Պէտք է ձիգ չխնայենք ամրապնդելու եւ հպօրացնելու համար Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետականութիւնները, որոնք հանդիսանում են ապագայ Ապտ, Անկախ ու Միացեալ Հայաստանի կերտման հիմնական կոռուանքները:

Այդ ուղիներում Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործունէութեան մէջ առաջնահերթաբար հետամուտ է եղել ու պիտի լինի երկրի ներքաղաքական եւ ներհասարակական կայունութեան ապահովման, երկրի ազգային անվտանգութեան համակարգի կատարելագործման եւ ամրապնդման:

Իսկ Դաշնակցութեան դիտանկիւնից, ներքաղաքական կացութեան կայունացման, տնտեսական վարզացման ու հասարակական կեանքի առողջացման երաշխիքներն են՝ հասարակական արդարութեան ու իրաւալի ունակութեան կայունութիւնը:

Սիւալ է այն մտեցումը կամ տեսակէտը, որ Հայաստանից արտագաղթի բուն պատճառները համարում են տիրող տնտեսական ծանր պայմաններն ու ձգնաձգումը, որովհետեւ արտագաղթողները առաջին շարքերում են գտնում ոչ թէ անպայման տնտեսապէս թոյլ, այլ փաստօրէն նաև ի՝ վիճակի տարրեր:

Արտագաղթի տուն տուող պատճառներից կարեւորագոյնը ժողովրդի մօտ հեռանալի բացակայութիւնն է, յուսալքութիւնն է, սոցիալ-տնտեսական անարդարութիւնը եւ օրէնքով պաշտպանուած չլինելու վարզումն է:

Դաշնակցութիւնը էլնելով իր գաղափարական համոզումներից՝ պարտաւոր է պաշտպանելու ճնշում, անիրաւու է դատաւարական շահերը, պետական համակարգը դէպի իրական, ժողովրդավա-



րակաւ եւ հասարակաւ ուղղութեանն ու յարգելու մեզանից առաջ և քաջամտութեամբ գաղափարական ընկերների ու նահատակների յիշատակը. Դաշնակցական լինեն նրանք, թէ Դաշնակցութեան գաղափարների համար՝ ազգի ու հայրենիքի սիրոյն Կոհուած պատմաարտիկներ՝ Արցախից մինչև Սարդարապատ ու Խանասարից մինչև Լիզպոն:

Գ.- ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ

Ազգային ինքնութեան, ազգային արժէքների պաշտպանութիւնը հայրենիքում տիրող ապտ շուկայական յարաբերութիւնների, համաշխարհայնացման ու հայ իրականութեան ներկայ պայմաններում մեր հրամայականներից է:

Եթէ անցնող հալարամեակում մեր ժողովրդի ազգային դիմագծի պահպանման մէջ կարեւոր դեր ունեցաւ Հայոց ազգային եկեղեցին ու մշակոյթը:

Եթէ խորհրդային տարիներին համայնավար աշխարհաքաղաքացիական գաղափարախօսութեան տիրապետութեան օրօք հայրենի մեր ժողովրդի ազգային ինքնութիւնը պահպանուեց շնորհիւ ստեղծուած յատուկ պայմանների ու մասնաւոր պետական հովանաւորութիւնը վայելող ազգային մշակոյթի, հսկայի Սփիւռքում անցնող տասնամեակներում հայապահպանումը յաջողուեց ազգային կառոյցների ու կուսակցութիւնների, մասնաւոր Հ. Յ. Դաշնակցութեան ձիգերի շնորհիւ:

Այսօր, ինչպէս այլ ազգեր, հայ ժողովրդը մինչև իսկ հայրենիքում ապտ շուկայական յարաբերութիւնների, հաղորդակցական կապերի ու քարոզչական յեղաշրջիչ վարզումների ու նոր աշխարհակարգի համաշխարհայնացման պայմաններում կանգնած է իր ազգային ինքնութեան դէմ մարտահրաւերների առջև, ուր ազգային արժէքները գուտաբանական են ենթակալ: Ազգային եկեղեցին, մշակոյթը, մրցակցութեան է դրուած աղանդաւորական, անդիւստրիալ միջապային «մշակոյթի» հետ: Ոչ միայն Հայոց ազգային եկեղեցին իր ներկայ անբաւարար ներկայութեամբ ու աշխատանքով, եւ ոչ էլ որոշ անձանց կամ միութիւնների օժանդակութեամբ ու հովանաւորութեամբ մշակութային նախաձեռնութիւնները կարող են կասեցնել այս ընթացքը, այլ ազգային գաղափարախօսութեամբ խարսխուած պետութիւնը միայն կարող է իր վրայ վերցնել հայ ժողովրդի ազգային ինքնութեան պաշտպանութեան, պարզացման ու բարգաւաճման պարտականութիւնը: Պետական համակարգ, ուր բոլոր ոլորտներում, քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային քաղաքականութիւններն ու որոշումները պիտի առնուեն ազգային շահերի ու ազգային արժէքների պաշտպանութեան էլակէտից:

Մինչև իսկ պիտի պետական մի համակարգի ձեւաւորումը, այդ պարտականութիւնը ծանրանում է Հ. Յ. Դաշնակցութեան ու համահայկական կառոյց ունեցող այն ազգային կազմակերպութիւնների վրայ, որոնք պատրաստ են խթան հանդիսանալ ու պայքարել ապագային կամ ազգային շահերը հարուածող որեւէ քաղաքականութեան կամ նախաձեռնութեան դէմ:

Սփիւռքը եւս իր ազգային դիմագիծը պահելու պայքարի մէջ ամէն օր մէկ քայլ նահանջ է արձանագրում: Եւ այս պայմաններում սփիւռքեան կրթամշակութային նախաձեռնութիւններն ու որոշումները, եկեղեցին, հայկական դպրոցները, ինչպէս նաև հայրենիքի հետ մշակութային սուկական կապերը սփիւռքեան գաղութների ազգային ինքնութեան պահպանման համար բաւարար չեն:

Մենք սեմոյուած ենք, որ հայրենիք-Սփիւռք անուր կապերն, համագործակցութիւնն ու համարկումը մասնաւոր սփիւռքահայութեան ուղղակի մասնակցութիւնը հայրենիքի տնտեսական կենսաբան պիտի գայ նոր լիցք ու ինքնութիւն ներարկելու սփիւռքեան գաղութներին:

Թուրքիա - Կարգապահ

ՄԵՍՈՒԹ ԵՐԼՄԱԶ ՓՏԱԾՈՒԹԵԱՄԲ Կ'ԱՄԲԱՍՏԱՆՈՒԻ



Պաշտոնի շահագործման դէմ թուրքիոյ կառավարութեան շղթայագերած պայքարին ծիրին մէջ, թուրքիոյ խորհրդարանը վերջերս կանաչ լոյս տուաւ նախկին վարչապետ Մեսուտ Երլմազի եւ 5 նախկին նախարարներու կասկածելի գործարքներուն շուրջ քննութեան:

Երլմազ վարչապետ Ռեճէփ Թայյիպ Էրտողանի օրով դատաքննութիւն դիմագրաւող ցարդ ամէնէն բարձրաստիճան պաշտօնատար պիտի ըլլայ:

Թուրքիոյ խորհրդարանը արտօնեց նախկին նախարարներու գործունէութեան քննութեան համար յանձնարարութեան կազմութիւնը: Ցանձնախումբերը իրենց կարգին պիտի որոշեն, թէ մեղադրուողներու թիւը արժանաւորութեան թուրքիոյ գերագոյն ատեան փոխանցման առաջարկ պիտի ներկայացնեն խորհրդարանին:

Երլմազ, որ 1999ին թուրքիոյ վարչապետն էր, իսկ թուրքիոյ նախորդ կառավարութեան մէջ՝ փոխ վարչապետ, կը մեղադրուի թրքական պետական դրամատան մը սեփականաշնորհումը ի նպաստ առեւտրականի մը գեղծելու յանցանքով: Այս գայթակղութիւնը 1999ին առաջնորդած էր Երլմազի կառավարութեան փլուզման: Նոյն հարցին գծով կ'ամբաստանուի նաեւ նախկին նախարար Ե. Երլմազի բարձրաստիճան խորհրդական Կիւնէշ Թանըրը:

Խորհրդարանը նաեւ արտօնեց քննութիւն բանալ պետական «Հալք Պանթար» դրամատան դիմագրաւած տաղանակներուն մէջ նախկին փոխ վարչապետ Հիւսամ Էթեմըլի Էթեմըլի եւ տնտեսութեան նախկին նախարար Ռեճէփ Կիւնէշի դերակատարութեան շուրջ:

Պետական դրամատուներ մօտ 20 միլիարդ կորսնցուցին ձախող գործառնութիւններուն պատճառով: Այս մէկը կը նկատուի 2001ի տնտեսական տագնապին պատճառներէն:

Փտառութեան ամբաստանութիւններ կը դիմադրուեն նաեւ ուսանողի նախկին նախարարներ Զեքի Չաքան եւ ձուճուր Էրսիմէֆ:

Վերոնշյալ բոլոր նախարարները, բացի Կիւնէշ Թանըրէն, մաս կը կազմէին նախկին վարչապետ Պիւլէնթ Էթեմըլիի գլխաւորած եռակողմ համաձայնական կառավարութեան:

«Այսօր այն օրն է, երբ անոնք, որոնք իրենց այնպէս ազատութեամբ շահագործեցին ազգը, ամօթով պիտի խորանուրի», յայտարարեց վարչապետ Ռեճէփ Թայյիպ Էրտողան:

Թուրքիոյ նախկին խորհրդարանը 2000ին Երլմազը արդարացուցած էր փտածութեան ամբաստանութիւններէ:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՋ ԿՈՌԱԾ ՁԻՆԵԱԼՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԱՊԱՍՏԱՆԻԼ ԱԶՐՊԵՅՃԱՆ

Ռուս սահմանապահներ ձերբակալած են Չեչենիոյ ապօրինի հրոսակախումբերուն մաս կազմած երկու կասկածելիներ, որոնք կը փորձէին անցնել Ազրպէյճան: Անոնք ներկայացուցած են կեղծ փաստաթուղթեր, որոնց վրայի պատկերները չեն համապատասխանած իրենց տէրերուն: Դէպքին շուրջ բացուած է մանրակրկիտ քննութիւն:

Ըստ ՌԻԱ «Նովոստի» լրատու գործակալութեան, այս տարուան ընթացքին Ռուսիոյ հարաւային սահմանամերձ շրջաններուն մէջ ձերբակալուած են աւելի քան երկու տասնեակ կասկածելիներ, որոնք առնչութիւն ունեցած են չեչենական զինեալ խմբաւորումներու հետ: Նոյն ժամանակաշրջանին ձերբակալուած են ռուս-ազրպէյճանական եւ ռուս-վրացական սահմանները խախտել փորձող մօտ երկու հազար կասկածելիներ, որոնց մէջ գրաւուած է մեծ քանակութեամբ զէնք, զինամթերք եւ պայթուցիկ նիւթեր:

ՔԱԿԻ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԸ ԱԶՐՊԵՅՃԱՆ ԿՐՆԱՅ ՀԱՍԱԾ ԸԼԼԱԼ

Ազրպէյճանի «Ազատիք» թերթը վերջերս հաղորդեց, որ՝ «ՔԱԿԻ ԱՊՂԻ պատուիրակը հասած է Պաքո» եւ կը փնտռէ միջոցներ հանդիմանում ունենալու ազրպէյճանացի պետական պաշտօնատարներու հետ:

Հարցին անդրադարձող այլ վերլուծողի մը համաձայն, ենթական՝ Շամիլովը Հաթար Ազրպէյճանի կառավարութեան արտօնութեամբ է, որ Պաքո եկած է: Ըստ վերլուծողին, Հաթար, որ քանի մը տարի առաջ մերժած է ազրպէյճանական հպատակութիւնը եւ հաստատուած է Ռուսիա, հաստատ երաշխիքներ ստացած է բարձրագոյն օդակներէ՝ ազատօրէն վերադառնալու հոն, ուրկէ եկած է Ազրպէյճան:

ՌԱՍՏԵԼՆ ԲԱՐԻՂԻ ԸՈՏԻՆ ԿԸ ԸԵՏԵԻ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՋ

